

ՈՉ ԲԱՆԿԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ցանկացած երկրի տնտեսական զարգացածության մակարդակը գնահատվում է նրա ֆինանսական շուկայի մակարդակով, իսկ ֆինանսական շուկայի զարգացածության աստիճանը որոշվում է նրանում մատուցվող ֆինանսական ծառայությունների բազմազանությամբ և մատչելիությամբ: Այդ երկու կարևոր պայմաններն ապահովելու համար ֆինանսական շուկան պետք է ապահովի ֆինանսական ծառայություններ առաջարկող տարբեր կառույցների համատեղ գոյությունը և առողջ մրցակցությունը: Մյուս կողմից, ֆինանսական շուկան ճկուն ու զարգացող համակարգ է, և տնտեսության զարգացմանը զուգընթաց առանձին երկրներում կարող են առաջանալ ֆինանսական միջնորդության նոր ձևեր, որոնք համապատասխան իրավական կարգավորման դեպքում կարող են հիմք հանդիսանալ ոչ բանկային ֆինանսական նոր տեսակի հաստատությունների ձևավորման համար:

Այսպիսով, ֆինանսական շուկայում բանկերի հետ միասին գործում են մի շարք այլ հաստատություններ, որոնք լրացնում են բանկերի ֆինանսական գործառնությունները՝ տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծելով այլընտրանքային վարկային ռեսուրսներ, ավելի արդյունավետ դարձնելով դրամական միջոցների հավաքագրման ու դրանց տեղաբաշխման գործընթացները: Առանձին ֆինանսական գործառնություններ իրականացնող ֆինանսական միջնորդների տեսակները բազմազան են: Դրանք են՝ վարկային և շինարարական միությունները, խնայողավարկային ասոցիացիաները, ապահովագրական, ֆինանսական, ներդրումային, բրոքերային, դիլերային և ֆակտորինգային ընկերությունները, միկրոֆինանսական կազմակերպությունները, կենսաթոշակային հիմնադրամները, գրավատները և այլն:

Զարգացած երկրներում տնտեսության վարկավորման բնագավառում հատկապես կարևոր տեղ են գրավում ոչ բանկային կազմակերպությունները, ոչ բանկերը, որոնք ֆինանսական ծառայություններ են մատուցում նրանց, ում համար բանկային ծառայությունները մատչելի չեն: Ոչ բանկերի գործունեությունը, որպես կանոն, կարգավորվում է ընդհանուր տնտեսական օրենսդրությամբ և առանձին օրենքներով ու իրավական այլ ակտերով, ինչը մեզանում դեռևս ձևավորման փուլում է, և առաջիկայում ևս կունենան իրենց տրամաբանական զարգացումները:

Հայաստանում ներկայումս կարող են գործել հետևյալ ոչ բանկային կազմակերպությունները, որոնց գործունեությունը կարգավորվում է համապատասխան օրենքներով: Դրանք են՝

- գրավատներ,
- գյուղատնտեսական վարկային ակումբներ,
- վարկային կազմակերպություններ՝
 - վարկային միություններ,
 - խնայողական միություններ,
 - լիզինգային կազմակերպություններ,
 - ֆակտորինգային կազմակերպություններ,
 - ունիվերսալ վարկային կազմակերպություններ:

Գրավատներն ունեն հին պատմություն և համարվում են ժամանակակից բանկերի նախատիպը: Մեզանում գրավատների գործունեությունը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական.

օրենսգրքով, «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ գրավատունն այն մասնագիտացված կազմակերպությունն է, որն ի ապահովումն քաղաքացիներին տրամադրված կարճաժամկետ վարկերի գրավ է ընդունում նրանց անձնական օգտագործման շարժական գույքը և այդ գործունեության համար ունի թույլտվություն, համապատասխան լիցենզիա:

Գրավատների հիմնական առաքելությունը քաղաքացիներին հնարավոր սեղմ ժամկետներում սպառողական վարկերի տրամադրումն է: Նրանց հաճախորդների շահերը պաշտպանելու, հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով օրենքով նախատեսված են որոշակի սահմանափակումներ: Այսպես, ի տարբերություն այլ վարկային կազմակերպությունների, գրավատները պարտավոր են իրենց մոտ պահվող քաղաքացիների գույքը ապահովագրել վնասվածքի և կորստի ռիսկերից: Բացի դրանից, գրավատների հաճախորդի պարտավորությունները գրավատան հանդեպ սահմանափակված են գրավատուն հանձնված գրավի առարկայի իրացման արժեքի չափով: Գրավատները կարող են տրամադրել վարկեր միայն ՀՀ դրամով: Գրավատները կարող են ներգրավել միջոցներ միայն բանկերից և այլ կազմակերպություններից: Ընդ որում, նրանց գործունեության նկատմամբ պարտադիր տնտեսական նորմատիվներ չեն սահմանվում:

Վերը նշված սահմանափակումները, ինչպես նաև գրավատների կողմից տրամադրվող վարկերի փոքր ծավալները բերում են գրավատան գործառնական ծախսերի ավելացմանը, որն էլ իր հերթին հանգեցնում է այդ վարկերի թանկացմանը և զանձվող տոկոսավճարների աճին: Ըստ Կենտրոնական բանկի վիճակագրական տվյալների՝ 31.12.2006թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 64 գրավատներ, որոնց ընդհանուր ակտիվները կազմել են 2,5 մլրդ դրամ, իսկ դրանց կողմից տրամադրված վարկերի մեծությունը՝ 1,7 մլրդ դրամ, կնքված 31 հազար պայմանագրերի արդյունքներով: Սակայն, որքան էլ թանկ են այդ վարկերը, այնուամենայնիվ հաշվետու տարում գրանցվել է տրամադրված վարկերի աճ 55%-ով, ինչը վկայում է այն մասին, որ մեր շուկայում դեռևս առկա է փոքր վարկերի մեծ պահանջարկ:

Սեզանում առանձնակի ուշադրության է արժանի գյուղատնտեսական վարկային ակտիվների զարգացումը, քանի որ այն, համաձայն ՀՀ «Գյուղատնտեսական վարկային ակտիվների մասին» օրենքի, իրավաբանական անձի կարգավիճակով, գյուղատնտեսական գործունեություն իրականացնող անձանց անդամության վրա հիմնված, ֆինանսական փոխադարձ օգնության նպատակով ստեղծված կամավոր միավորում է, որը կարող է ստեղծվել ոչ առևտրային կոալերատիվի կամ իրավաբանական անձանց միության ձևով:

Ակտիվների պահվմների ձևավորման համար նախատեսված են հատուկ պայմաններ, մասնավորապես ակտիվի սեփական միջոցները ձևավորվում են անդամների կամավոր և պարտադիր վճարներից, պետական, համայնքային, միջազգային կազմակերպությունների միջոցներից, անհատույց ֆինանսավորումից և այլ աղբյուրներից:

Ակտիվի սեփական միջոցները, իրենց հերթին, բաղկացած են կանոնադրական հիմնադրամից և պահուստներից: Կանոնադրական հիմնադրամում կատարված ներդրումները, ինչպես նաև դրանց բաժին ընկնող հավելաճն ակտիվի անդամները կարող են ստանալ միայն ակտիվից դուրս գալու դեպքում: Բացառությամբ դրամաշնորհների, պահուստներում հաշվառված միջոցները, օրենքի համաձայն, համատեղ սեփականություն են և կարող են բաշխվել միայն ակտիվի լուծարման դեպքում, այդ պահին ակտիվի անդամ հանդիսացող անձանց միջև, կանոնադրական հիմնադրամում վերջիններիս ունեցած մասնակցությանը համապատասխան:

Ակտիվների հիմնական խնդիրն իրենց անդամներին փոխառություններ և ֆինանսական օգնություն տրամադրելն է: Իր անդամին փոխառություն տրամադրելիս ակտիվը կրում է այն ետ չստանալու բավական մեծ ռիսկ և այդ իսկ պատճառով, օրենքի համաձայն, յուրաքանչյուր

անդամ պարտավոր է ակումբում հաշվառել իր այն գույքի մասը, որն օրենսդրությամբ կարող է հանդիսանալ բռնագանձման առարկա: Փոխառության պայմանագրի կետանցի դեպքում ակումբին է անցնում նշված գույքի նկատմամբ գրավի իրավունքը:

Միջազգային պրակտիկայում գյուղատնտեսության վարկավորման ռիսկերը նվազեցնելու համար հաճախ ստեղծում են (այդ թվում պետական միջոցների հաշվին) գյուղատնտեսական հիփոթեքային վարկի կորպորացիաներ, որոնք մի կողմից իրականացնում են առևտրային բանկերի և գյուղացիական տնտեսությունների միջև ֆինանսական միջնորդության գործառնություն, մյուս կողմից՝ երաշխավորում են տրամադրվող վարկերի վերադարձելիությունը: Հայաստանում վերը նշված կորպորացիայի հիմնական գործառնությունները կարող են իրականացնել գյուղատնտեսական վարկային ակումբների աջակցության միասնական հիմնադրամը և գյուղատնտեսական վարկային ակումբների միությունը:

Վերջին տարիների ՀՀ տարածքում գործող բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի բարձրացման պահանջը էապես նպաստեց 2002թ. «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ընդունմանը, քանի որ առաջացել էր վարկային գործառնություններում մասնագիտացված կազմակերպությունների մի մեծ բանակ, որոնք հետագա գործունեության և իրավական կարգավիճակի ճշգրտման կարիք ունեին: Դրանով պայմանավորված՝ հիմք դրվեց ոչ միայն բանկերի մի մասի գործունեության տեսակի փոփոխության, այլ նաև նոր վարկային և խնայողական միությունների, լիզինգային, ֆակտորինգային և ունիվերսալ վարկային կազմակերպությունների ստեղծման ու գործունեության համար: Ներկայումս Հայաստանի տարածքում գրանցված են տասնյոթ վարկային կազմակերպություն՝ տասներկու մասնաճյուղերով, որոնցից երկուսը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն և տասնչորսը՝ ունիվերսալ վարկային կազմակերպություն:

Վարկային կազմակերպությունները ՀՀ տարածքում կարող են ստեղծվել բաժնետիրական ընկերության, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, առևտրային կամ ոչ առևտրային կոոպերատիվի կազմակերպատիրական ձևերով: Ընդ որում խնայողական միությունները՝ բացառապես կոոպերատիվների ձևով:

Այս կազմակերպություններից, հաշվի առնելով մեր տնտեսության զարգացման մակարդակը և ֆինանսական շուկայի առանձնահատկությունները, որտեղ մեծ անհրաժեշտություն կա երկար փողերի շուկայի ձևավորման համար, հատկապես կարևորվում են լիզինգային, հիփոթեքային և ապահովագրական ընկերությունները: Լիզինգը իր սկզբնական իմաստով նշանակում էր վարձակալություն, որտեղ տրամադրվում էր վարձատուի սեփականություն հանդիսացող գույքը վարձակալին որոշակի փոխհատուցման պայմանով: Սակայն լիզինգի կիրառությունը հետագայում առաջ բերեց նոր վարձակալության ձև՝ ֆինանսական վարձակալություն:

Լիզինգի գաղափարը ծագել է խոր հնադարում, բայց որպես տնտեսական հասկացություն այն շրջանառության մեջ է դրվել տասնիններորդ դարում: Ռուսաստանի Դաշնությունում լիզինգ հասկացությունը թեև առաջ է եկել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում, սակայն օրենսդրության մեջ փոփոխությունները կատարվել են 1989-1990 թթ.: Այս ժամանակահատվածում կարգավորվեցին նաև հաշվապահական հաշվառման մեջ լիզինգային գործառնությունների արտացոլման կարգն ու եղանակները: Ռուսաստանում լիզինգային ընկերություններն առաջացան 1990թ.: 1994թ. ստեղծվեց լիզինգային ընկերությունների ասոցիացիան՝ «Ռուսլիզինգ»: Այն հետագայում դարձավ լիզինգային ընկերությունների եվրոպական ֆեդերացիայի «LEASEUROPE» անդամ:

Ֆինանսավորման այս ձևը աչքի է ընկնում մի շարք առանձնահատկություններով, այն է՝ փոքր և միջին ձեռնարկությունները, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունները ստանում են միջին և երկարաժամկետ ֆինանսավորում ունենալու հնարավորություն՝ այսպիսով խթանելով տնտեսական զարգացումը: Այս ծառայության միջոցով յուրաքանչյուր ֆինանսապես

կայուն ձեռնարկատեր հնարավորություն է ստանում ձեռք բերել քանկարժեք մեքենասարքավորումներ՝ առանց դրանց համար միանգամից մեծ գումարներ ծախսելու: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Միջազգային ֆինանսական կորպորացիան IFC(Համաշխարհային բանկի անդամ), իրականացնելով Միավորված ազգերի կազմակերպության համար շուկայի հետազոտություն, ցանկություն հայտնեց Հայաստանում լիզինգային գործառնություններ իրականացնելու հնարավորություններ ստեղծել: Լինելով մասնակից Լիբանանյան լիզինգային ընկերության ստեղծմանը (LLC) և ունենալով նրա գործունեության հաջող փորձը՝ IFC-ին դիմեց ԱՄՆ զարգացման միջազգային գործակալությանը (USAID) և 2001թ. զարմանը առաջարկեց ֆրանսիական Կրեդիտ ագրեկոլ բանկային խմբին՝ դառնալու համափայտեր Հայաստանում լիզինգային ընկերության ստեղծման ծրագրում: Այս պայմաններում Հայաստանում ստեղծվեց առաջին լիզինգային ընկերությունը: Այսօր Հայաստանում գրանցված են միայն երկու լիզինգային ընկերություններ, որոնց վարկային ներդրումների ծավալը՝ ամբողջ ոչ բանկ վարկային կազմակերպությունների 16, 6 մլրդ դրամից, բաժին է ընկնում ընդամենը մեկից երկու տոկոսը:

Համաշխարհային տնտեսությունում լիզինգի ձևով ներդրումների ծավալը գնալով աճում է, դա բացատրվում է նրանով, որ լիզինգն ապահովված գործարք է, վարձատուին թույլ է տալիս փոքրացնել ակտիվային գործառնությունների ռիսկը, քանի որ լիզինգի պայմանագրի ընթացքում նա շարունակում է մնալ լիզինգի առարկայի սեփականատերը և վարձակալի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում կարող է այն իրացնել: Ներդրումների այս ձևը գրավիչ է նաև վարձակալի համար, քանի որ այն թույլ է տալիս զգալիորեն կրճատել կապիտալ ներդրումները, խուսափել հիմնական միջոցների բարոյական մաշվածության արագացման հետ կապված կորուստներից: Բացի դրանից ամբողջ աշխարհում լիզինգային գործառնությունները խրախուսվում են տարբեր տիպի հարկային արտոնությունների կիրառմամբ: Օրինակ՝ Անգլիայում խրախուսվում են այն գործառնությունները, երբ գույքը ձեռք է բերվում վարձատուի կողմից հետագայում սեփականության իրավունքի փոխանցմամբ վարձակալին, ԱՄՆ-ում՝ ընդհակառակն խրախուսվում է այն գործառնությունները, երբ գույքը ձեռք է բերվում միայն օգտագործման նպատակով: Այսպիսի հարկային արտոնությունների առկայությունը հիմք դրեց միջազգային «Պարլ դիպ» լիզինգային գործառնությունների առաջացմանը և զարգացմանը տարբեր երկրների միջև: Հարկային այսպիսի համադրումները երբեմն կարող են հանգեցնել նույնիսկ ավելի ցածր տոկոսային վճարումների, քան անվանական բանկային վարկային տոկոսադրույքներն են: Օրինակ, 90-ական թվականների վերջին մի շարք ինքնաթիռների ձեռքբերումը ամերիկյան ավիաընկերությունների կողմից իրականացվեցին «Պարլ դիպ» գործառնություններով ԱՄՆ-ի և Անգլիայի միջև: Անգլիական լիզինգային ընկերությունները գնում էին ինքնաթիռներ Ֆրանսիայից և այն վարձակալությամբ հանձնում ամերիկյան լիզինգային ընկերություններին, նրանք էլ իրենց հերթին դրանք վարձակալության էին տալիս տեղական ավիաընկերություններին: Ասվածից ակնհայտ է, որ լիզինգը տնտեսության զարգացման համար կարող է դառնալ լուրջ խթան, բայց դրա զարգացումը հնարավոր է միայն հուսալի երաշխիքային մեխանիզմների և տնտեսական շահագրգռվածության առկայության դեպքում, ինչպես նաև հարկային մի շարք արտոնությունների կիրառմամբ, մասնավոր դեպքերում նաև պետական երաշխավորությունների տրայֆադրմամբ:

Ոչ բանկ հաստատություններից տնտեսության զարգացման համար պակաս կարևոր դեր չունեն նաև ֆակտորինգային կազմակերպությունները, որոնք, կամովին ստանձնելով պարտքի չվերադարձման ռիսկը, բացում են դեբիտորական պարտքերի գծով առաջացած ֆինանսական ներհոսքի խցանումները: Ֆակտորինգը առաջին անգամ կիրառվել է ԱՄՆ-ում տասնիններորդ դարի վերջին, այնուհետև այն լայն կիրառություն է գտել զարգացած արևմտյան երկրներում: Առևտրային բանկերում այն սկսել են կիրառել վերջին քսանհինգ-երեսուն տարիներին: Ֆակտորինգ իրականացնելու միջոցով բանկերը կամ վարկային կազմակերպությունները ձեռք

են բերում նախկինում պարտք տված անձի պահանջի իրավունքը պարտապանի նկատմամբ, սակայն իրավաբանական տեսանկյունից այդ գործարքը, ինչպես և լիզինգը, վարկային գործարք չեն: Բայց քանի որ դրանք տեսականորեն վարկին շատ մոտ ներդրման ձև ունեն, ըստ ժամկետայնության, վերադարձելիության և հատուցման սկզբունքների, վերագրվում են վարկային գործառնություններին: Հայաստանում լիզինգային և ֆակտորինգային կազմակերպությունները միասնական կարգավորման դաշտում ընդգրկելը պայմանավորված է այդ կազմակերպությունների ներդրումային գործունեության ընթացքում ծագող ռիսկերի նույնությամբ: Սակայն, ըստ էության, դրանք տարբեր գործառնություններ են և զարգացած երկրներում, ի տարբերություն լիզինգի, ֆակտորինգը հիմնականում իրականացվում է վարկային գործարքներում չմասնագիտացված կազմակերպությունների կողմից, որոնք մասնագիտացված են պարտքեր վերադարձնելու բնագավառում, ունեն համապատասխան իրավաբանական, վերլուծական, իսկ երբեմն էլ հետախուզական ստորաբաժանումներ, և քանի որ այսպիսի ստորաբաժանումներ ունեն բանկերը, ապա այս ծառայությունները դառնում են բանկային գործառնություններ:

Ի տարբերություն Հայաստանի՝ արտասահմանյան երկրներում վարկային կազմակերպությունների առանձին տեսակներ գտնվում են բոլոր զարգացման փուլում և արդեն իսկ լուրջ մրցակից են բանկային համակարգի համար, այդ թվում՝ համայնքային, գյուղատնտեսական, կրթական, սպառողական և այլ տեսակի նպատակային վարկավորման բնագավառներում: Առաջին վարկային միությունները ստեղծվել են Գերմանիայում, իսկ ներկայումս մեծ տարածում են ստացել ԱՄՆ-ում, որտեղ դրանք դիտարկվում են որպես այլընտրանքային բանկային համակարգ: Դրանց հիմնական առաքելությունը, ընդհանուր հատկանիշներով միավորված, առանց շահույթ ստանալու նպատակ հետապնդելու, իրենց անդամներին առավել մատչելի ֆինանսական ծառայություններ մատուցելն է:

Միջազգային պրակտիկայում տարածված են նաև ոչ բանկային ֆինանսական կազմակերպությունների այլ տեսակներ, այդ թվում՝

- շինարարական միություններ,
- ֆինանսական ընկերություններ(տներ),
- միկրոֆինանսավորող ոչ առևտրային կազմակերպություններ,
- պետական (միջազգային) վարկային կազմակերպություններ,
- վարկարժանության վարկանիշ շնորհող գործակալություններ և այլն:

Շինարարական միությունների գործունեությունն ուղղված է տարբեր եղանակներով միջոցների ներգրավման կամ բնակելի տների շինարարության համար երկարաժամկետ վարկերի տրամադրմանը: Վարկավորման այս ձևի յուրահատկությունն այն է, որ շինարարական միությունը, վարկ տրամադրելով, միաժամանակ ձեռք է բերում գրավի իրավունք դրա հաշվին կառուցված կամ ձեռք բերված տան կամ բնակելի տարածքի նկատմամբ, այլ կերպ ասած դրանք հիփոթեքային վարկեր տրամադրող մասնագիտացված ոչ բանկային կազմակերպություններ են: Վերջին տասնամյակներում շինարարական միություններին օրենսդրորեն, օրինակ՝ Անգլիայում, թույլատրվեց իրականացնել գրեթե բոլոր դասական բանկային ծառայությունները: Ավելին, ժամանակակից ֆինանսական ծառայությունների շուկայում ուժեղ մրցակցության արդյունքում լայն տարածում է ստացել շինարարական միությունների միաժամանակ և դրանք տնտեսական ընկերությունների վերակազմավորելու միտումը, ինչը ըստ էության նշանակում է այդ միությունների կողմից առևտրային բանկի կարգավիճակի ձեռքբերում: Այսօր Հայաստանում առկա են բոլոր հիմքերը շինարարական միությունների ձևավորման և նույնիսկ առանձին մասնագիտացված շինարարական առևտրային բանկերի ստեղծման համար, ինչը կնպաստի հիպոթեքային վարկերի տակոսադրույթների նվազեցմանը:

Լիզինգային ընկերությունների մյուս ֆինանսական ընկերությունները կամ ֆինանսական տները շատ դեպքերում հիմնադրվում են առևտրային բանկերի կողմից, սպառողական վարկավ-

որման գործառնությունն առավել մասնագիտացված և արդյունավետ իրականացնելու նպատակով: Նրանց հիմնական գործունեությունը թանկարժեք սպառողական ապրանքների գնման համար վարկեր տրամադրելն է: Ի տարբերություն բանկերի՝ ֆինանսական տները ավանդների ներգրավման փոխարեն իրականացնում են կարճաժամկետ առևտրային արժեթղթերի թողարկում, իսկ որոշ դեպքերում փոխառություններ են վերցնում մասն աշխարհում ֆինանսական միջնորդներից: Նրանց եկամտի աղբյուրը ներգրավված միջոցների, հիմնականում բանկային վարկերի և տրամադրվող առևտրային ապրանքային վարկերի տոկոսների տարբերությունն է: Մի շարք երկրներում, օրինակ՝ Անգոլայում, սպառողական վարկավորումը, ինչպես մասն ապրքերաբար իրականացվող ապառիկ վաճառքը դիտարկվում է որպես լիցենզավորման ենթակա գործունեություն և պետք է համապատասխանի կարգավորող մարմնի կողմից ներկայացվող որոշակի պահանջների:

Ֆինանսական շուկան պետք է հասանելի լինի հասարակության բոլոր խավերի համար, այլ ոչ թե միայն որոշ խմբերի մենաշնորհը: Մասնավորապես խոսքը վերաբերում է բնակչության անապահով խմբերին պատկանող անձանց, կանանց, փախստականներին, հաշմանդամներին, գործազուրկներին և այլն: Քանի որ մասն վարկավորումը ենթադրում է հիմնականում փոքրածավալ վարկերի տրամադրում, ապա այդ գործունեությունը անվանում են միկրոֆինանսավորում, իսկ այն իրականացնող առևտրային կազմակերպությունները՝ միկրոֆինանսավորողներ:

Ներկայումս Հայաստանում գործող տեղական և միջազգային միկրոֆինանսավորող կազմակերպությունները հիմնականում ունեն են մարդասիրական մղումներ և ֆինանսավորվում են արտասահմանյան դոնորական միջոցների, այդ թվում՝ Ամերիկյան միջազգային զարգացման գործակալության (USAID), Գերմանական տեխնիկական համագործակցության (GTZ), Գյուդատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), Էկոմենիկ եկեղեցական փոխատվական հիմնադրամի միջազգային գրասենյակ (ECLOF-International), Շվեյցարիա, Միջեկեղեցական աջակցության և համագործակցության կազմակերպություն (ICCO), Նիդեռլանդներ և այլն, հաշվին: Հայաստանում գործող բազմաթիվ միկրոֆինանսավորողները, որպես կանոն, վարկեր են տրամադրում առանց գրավի: Միևնույն ժամանակ միկրոֆինանսավորման շրջանակներում, որպես մեկ անձի վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման միջոց, հիմնականում նախատեսվում են այդ կազմակերպության այլ վարկառուների համապարտ պատասխանատվության տարբեր եղանակներ, խմբակային վարկեր: Այս կազմակերպությունները հիմնականում գրանցված են որպես շահույթ չհետապնդող կազմակերպություններ, հիմնադրամների ձևով, որոնց շահառուների ընդհանուր քանակը ներկայումս գերազանցում է երեսուն հազարը: Զարգացման որոշակի փուլում, որպես կանոն, բոլոր միկրոֆինանսավորող կազմակերպությունները կանգնում են ընտրության առաջ՝ վերակազմավորվել մեկ այլ ոչ բանկի կամ շարունակել վարկավորումը անփոփոխ եղանակներով: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, միկրոֆինանսավորող կազմակերպությունները իրենց գործունեության ընթացքում բախվում են որոշակի խնդիրների՝ կապված օրենսդրական անկատարության և բացթողումների հետ: Նման իրավիճակից հնարավոր է խուսափել միայն այն դեպքում, երբ մանրակրկիտ վերլուծության արդյունքում ստեղծվեն այնպիսի իրավական ակտեր, որոնք բխեն ինչպես այս կազմակերպությունների սոցիալական առաքելության յուրահատկություններից, այնպես էլ վարկային շուկայի այլ մասնակիցների ու պետության շահերից: Այս խնդիրը հատկապես կարևորվում է Հայաստանի համար, որտեղ միկրոֆինանսավորման շահառուների քանակը դեռևս շատ մեծ է, մինչդեռ օրենսդրական դաշտը՝ ոչ նպաստավոր՝ կապված դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստների բացակայության, վարչակառավարչական ծախսերի սահմանափակումների հետ և այլն:

Տնտեսապես թույլ զարգացած և զարգացող երկրներում կարևոր տեղ են զբաղեցնում պետական վարկային կազմակերպությունները, պետական ոչ բանկերը, որոնց հիմնադիրը

պետությունն է: Դրանց միջոցով պետությունը հնարավորություն է ունենում ուղղակիորեն իրականացնել ներքին կամ արտաքին տնտեսական գործունեության վարկավորում, այդ թվում նաև ոչ բանկերի ֆինանսավորում: Այսպիսի վարկային կազմակերպություն կարող է ստեղծվել նաև մի քանի պետությունների կողմից, որոնք կոչվում են միջազգային վարկային կազմակերպություններ: Վերջիններս գործում են միջազգային պայմանագրերի հիման վրա: Այն կարող է իրականացնել հաճախորդների սահմանափակ անդամ պետությունների շրջանակներում: Միջազգային ոչ բանկերը բուռն զարգացում են ապրել հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, պատերազմական գործողություններից քայքայված տնտեսությունները ֆինանսավորելու նպատակով: Ներկայումս դրանց հիմնական խնդիրն է համաշխարհային տնտեսության զարգացումը, ինչպես նաև աղքատ և հարուստ ազգաբնակչության կենսամակարդակների աստիճանական համահարթեցումը: Այս ոչ բանկերի յուրահատկությունն այն է, որ վարկերը, որպես կանոն, տրամադրվում են անկախ պետություններին կամ խոշոր տնտեսվարող սուբյեկտներին: Բնական է, որ վարկերի չվերադարձման ռիսկերը այս դեպքում էապես տարբերվում են «սովորական» վարկավորման ռիսկերից: Այդ ռիսկերը նվազեցնելու, վարկերի վերադարձելիությունն ապահովելու համար պետությունները հաճախ միախմբում են իրենց կարողությունները և ստեղծում այսպես կոչված «միջազգային վարկային ակումբներ», որոնք ևս համարվում են ոչ բանկեր: Միջազգային վարկային ակումբներից ամենահեղինակավորը «Փարիզյան ակումբն» է, որի անդամներն են Բելգիան, Անգլիան, Գերմանիան, Իտալիան, Կանադան, Նիդեռլանդները, Ֆրանսիան, Շվեդիան, ԱՄՆ-ը, Ճապոնիան, Ավստրիան, Ավստրալիան, Դանիան, Ֆինլանդիան, Նորվեգիան, Ռուսաստանը, Իսպանիան, Շվեյցարիան:

Ոչ բանկային կազմակերպությունների շարքում հատուկ տեղ են զբաղեցնում ապահովագրական ընկերություններն ու կենսաթոշակային հիմնադրամները: Հատկապես այն առումով, որ դրանց գործունեությունը դրսևորվում է ինչպես մակրոտնտեսական, այնպես էլ միկրոտնտեսական մակարդակներում: Դրանք նպաստում են ֆինանսական կայունությանը և նվազեցնում հանրային անհանգստությունը, հնարավորություն են ստեղծում ռիսկը առավել արդյունավետ կառավարելու, աջակցում են կապիտալի ավելի արդյունավետ բաշխմանը, խթանում են առևտուրն ու ապրանքաշրջանառությունը, համախմբում խնայողությունները, թեթևացնում են վնասների բեռը և ամենակարևորը՝ կարող են հանդես գալ կառավարության ապահովության ծրագրերի փոխարինող:

Ապահովագրությունը համախմբում և ուղղորդում է ազգային խնայողությունները: Խնայողությունների բարձր մակարդակ ունեցող երկրներին հատկանշական է արագընթաց տնտեսական աճը: Վերջին տաս տարվա ընթացքում աշխարհում ամենաբարձր տնտեսական աճ ունեցող քսան երկրներից տասնչորսում խնայողությունների մակարդակը գերազանցում է ՀՆԱ-ի 25%-ը, և դրանցից ոչ մեկում խնայողությունների տոկոսը ցածր չի եղել 18%-ից: Ընդհակառակն, աշխարհում ամենացածր տնտեսական աճ ունեցող քսան երկրներից տասնչորսում խնայողությունների մակարդակը չի գերազանցել ՀՆԱ-ի 15%-ը: Ի տարբերություն առևտրային բանկերի՝ կյանքի ապահովագրության և այլ խնայողական հիմնադրամները գործում են ավելի երկարաժամկետ ոլորտում, և վերջիններիս պարտավորությունների երկարաժամկետ բնույթն ու կանխիկ հոսքերի համեմատական կայունությունը թույլ են տալիս միջոցներ առաջարկել ընկերություններին երկարաժամկետ նախագծերի ֆինանսավորման համար: Ապահովագրության կարևոր գաղափարն այն է, որ որոշ դեպքերում այն կարող է «թեթևացնել պետության հոգսը» սոցիալական հարցերը լուծելու առումով: Հայաստանի՝ ապահովագրական ընկերություններն ունեն որոշակի առանձին բնութագրեր, որոնք բնորոշ չեն զարգացած ապահովագրական շուկայի ընկերություններին: Դրանցից հիմնականն այն է, որ նրանք չունեն մշակված ներդրումային քաղաքականություն, չի գործածվում միջոցների ներդրումային վերլուծություն՝ ըստ ժամկետայնության և ռիսկայնության: Ընկերությունները շատ հաճախ, խուսափելով ռիսկային գործառնություններից,

իրենց միջոցները ներդնում են ՀՀ կառավարության կողմից թողարկված առավել հուսալի արժեթղթերում, ինչպես նաև վերաապահովագրության գործառնություններում, որոնք բնականաբար ունեն ցածր եկամտաբերություն: Օրինակ՝ 2006 թվականին ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 27,3 մլրդ դրամ, որից 27 մլրդ դրամը կամ 98, 6%-ը վերաապահովագրողի մասնակցությունն է վնասի հատուցմանը¹, իսկ տարեվերջին, ըստ նույն աղբյուրի, ապահովագրական ընկերությունների գործող ապահովագրության պայմանագրերի քանակը եղել է 29,5 հազար հատ: Պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների մեծությունը կազմել է 3.93 տրլն դրամ, որից 3.76 տրլն դրամը կամ 95,7%-ը վերաապահովագրողների ստանձնած պարտավորություններն են: Ի տարբերություն Հայաստանի և միջին սոցիալիստական մի շարք երկրների՝ զարգացած տնտեսություն ունեցող երկրներում ապահովագրական ընկերություններն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ֆինանսական շուկաներում: Մեծ Բրիտանիայում ֆինանսական շուկայում ձևավորված ներդրումների երեսունից քառասուն տոկոսը բաժին է ընկնում ապահովագրական ընկերություններին: Ըստ որում, նրանք հանդես են գալիս ինչպես կարճաժամկետ (հիմնականում ոչ կյանքի ապահովագրության գծով), այնպես էլ երկարաժամկետ (կյանքի ապահովագրության գծով) միջոցների խոշորագույն առաջարկողներ ֆինանսական շուկայում: Մեզանում ապահովագրական շուկայի տարողունակությունը խիստ փոքր է, մյուս կողմից ապահովագրության զարգացման համար համապատասխան ռեսուրսներ չկան: Այս խնդիրների լուծմանը մասնակիորեն կնպաստի պարտադիր ապահովագրության համակարգի ներդրումը ապահովագրության որոշ տեսակների գծով: Այն կօժանդակի շուկայի տարողունակության ընդլայնմանը և ներդրումային նպատակների համար ռեսուրսների աճին:

Ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային հիմնադրամների զարգացման համար այսօր Հայաստանում անհրաժեշտ է մի շարք միջոցառումների իրականացում:

Դրանք են՝

- ապահովադիրների, ապահովագրվողների և այլ շահառուների շահերի պաշտպանության ապահովում,
- ապահովագրական համակարգի զարգացման, հուսալիության և բնականոն գործունեության ապահովում,
- ապահովագրական գործունեություն իրականացնողների համար ազատ մրցակցության հավասար պայմանների ստեղծում:

¹ Հայաստանի ֆինանսական համակարգը - Զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Երևան, 2006: